Ծանուցէ 'ի Դուռն, և նա արար ըստ կամաց նոցա այսպէս. «Բառակուսի գերեզմանատունն գնեալ են Լատինք 'ի մեծ Փոխանորդէն Հայոց՝ 'ի թուին ١٠٦٩, որ 'ի նմին ժամանակի իշխան և տնօրէն էր համօրէն գործոց նոցին, և տիրեալ են նմա զամն իբրեւ 120. Հայք չունին տաբնչութիւն ինչ ընդ տեղւոյն այնորիկ»։

Այլ երկպառակութիւնն որ ծագեալ է յամաց հետէ 'ի միջի սոցա, վերո 'ի վայր շրջեալ է զբարեկամութիւնն. Հայք 'ի պատճառս ատելութեան և ոխակալութեան հակառակեալ են Լատինաց. և 'ի դատիլն սոցա յառաջնում ամի առաջի կուսակալի և դատաւորի տարւոյն, խափանեալ է ընդդիմութիւնն Հայոց, և տուեալ մուրհակ Լատինաց 'ի դատարանէ։ Հայք ստութեամբ ամբաստան լեալ են առ Արքայ, որպէս թէ հանեալ իցեն զվեռեալս 'ի գերեզմանաց, և զնոսա դանակոծեալ և արգելեալ 'ի բանտ, և մատնեալ 'ի տոյժս և 'ի տուգանս, եւ յայլ յայդպիսի պատիժս հակառակ կամաց Կայսեր, որպէս տեսաւ 'ի հրովարտակին, որպէս համարձակին Հայք ձեռն մեկել յիրաւունս Լատինաց հակառակ մուրհակաց, և 'ի ստութիւնս խոնարհին. և յատենի անդ յորժամ հարցաւ 'ի վարդապետացն Հայոց, թէ յինչ պատճառս 'ի դատ ելիք սակս մուրհակաւ որոշեալ տեղւոյն, և ունիք առ ձեզ քան զայն զօրաւոր մուրհակս, մատուցէք. Փոխանորդն Հայոց ոչ է կարացեալ առաջի առնել մուրհակս եւ բերել վկայս, այլ խոստովանեալ թէ չունիմք իրաւունս 'ի վերայ տեղւոյն այնորիկ, և թէ՝ չունիմք տեղեկութիւն ինչ զաղերատգրէն մատուցելոյ առ Արքայ և յերկարել զգործս. զուցէ յուխտաւորաց լուեալ իցէ զայն։

Ապա յարէ դատաւորն 'ի կողմանէ իւրմէ, որ տուեալ էր յառաջագոյն Հայոց եւս գիր, արդարեւ գերեզմանատունն այն սահմանօքն սեփհական է Լատինաց, ըստ վկայութեան այլազգեաց. եւ ես բարւոք խելամուտ լեալ, եւ տու նոցա մուրհակ 'ի դատարանէ ժառանգել զտեղին առանց հակառակելոյ ուրուք, եւ բարւոք ծանեաք որ այսպիսի խռովութիւնք ծագեալ են յերկպառակութենէ, պաշտպանեցաք զերկոսին կողմն և հաշտեցուցաք ընդ միմեանս և բարձաւ 'ի միջոյ խռովութիւնն, եւ երկաքան-